Բովանդակություն

Լոռու և Տավուշի մարզերի զբոսաշրջության զարգացման համեմատական բնութագիրը:.....2
Ներածություն.....2
Ուսումնասիրության նպատակը.....3
Ուսումնասիրության մեթոդաբանությունը.....3
Լոռու մարզ.....5
Վանաձոր.....7
Ստեփանավան.....7
Տաշիր.....8
Ալավերդի.....8
Տավուշի մարզ.....9
Դիլիջան.....11
Իջևան.....13
Նոյեմբերյան.....13
Բերդ.....14
Համեմատական վերլուծություն զբոսաշրջության զարգացման մեջ ՏԻՄ դերակատարման վերաբերյալ.....14
Եզրակացություն.....16

Լոռու և Տավուշի մարզերի զբոսաշրջության զարգացման համեմատական բնութագիրը:

Ներածություն

Արդեն շուրջ մեկ տասնամյակ է զբոսաշրջությունը համարվում է ՀՀ տնտեսական զարգացման գերակա ուղղություններից մեկը, որին բաժին է ընկնում ՀՀ ՀՆԱ շուրջ 4,4%-ը (477,7 մլն ԱՄՆ դոլար՝ 2017թ.), իսկ 2018-2028 թթ համար կանխատեսվում է տարեկան 4,2% աճ, 2028 թ. 8,5 % (784,3 մլն ԱՄՆ դոլար) ՀՆԱ մասնաբաժնով: Զբոսաշրջության ոլորտը ՀՀ-ում ապահովում է 44 500 աշխատատեղ (2017թ.)՝ 2018-2028 թթ համար տարեկան 1,4% աճի կանխատեսմամբ, իսկ 2028 թ.՝ 52 000 աշխատատեղի ապահովմամբ: 2017 թ. այցելուների կողմից ապահովվող արտահանման բաժինը կազմել է ՀՀ ընդհանուր արտահանման ծավալի 29,2%-ը (1,092.4 մլն ԱՄՆ դոլար), որը 2018-2028 թթ. համար կանխատեսվում է 3,2 % տարեկան աճ ծավալով՝ 2028 թ. 27,5 % մասնաբաժնով (1,754.5 մլն ԱՄՆ դոլար): Այս ցուցանիշների նման վիճակը պայմանավորված է ՀՀ ներգնա զբոսաշրջինների քանակի ավելացմամբ. 2018 թ. այն կազմել է ավելի քան 1,6 մլն զբոսաշրջիկ, որը շուրջ 13 անգամ գերազանցում է 2000 թ. գրանցված արդյունքը:[1]

Ըստ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջային կոմիտեի կողմից ներկայացված վիճակագրության[2] 2025 թվականի ընթացքում ՀՀ է եկել 2,2 մլն. զբոսաշրջիկ, իսկ 2026 թվականի հունվար-փետրվար ամիսներին ավելի շատ, քան նախորդ տարվա նույն ամիսներին (տես հավելված 1-ում):

	Հունվար	Փետրվար
2025	139482	117372
2026	179409	121285

Հավելված 1

Այս տվյալները փաստում են այն մասին, որ զբոսաշրջությունը տարեցտարի ավելի է զարգանում Հայաստանում, որն էլ նպաստում է զբոսաշրջիկների նոր հոսքին: 2023 թվականի տվյալներով՝ Լոռու մարզ այցելել է 3280 մարդ, իսկ Տավուշի մարզ 22999 մարդ:

Ըստ Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության զարգացման 2024-2028 թվականների ռազմավարության[3]՝ 2028 թվականի վերջին երկրում պիտի լինեն տեղական իշխանություններ և մարզպետի աշխատակազմեր, որոնք պետք է ապահովեն զբոսաշրջության վերաբերյալ համայնքում կայացվող միջոցառումներին

[1] http://tavush.mtad.am/files/docs/45077.pdf

[2] https://www.mineconomy.am/page/89

[3] https://www.e-draft.am/files/project_file/1/16890542172727.xlsx

իրենց մասնակցությունը և անմիջական ներգրավվածություն պիտի ունենան ռազմավարական ծրագրերի ստեղծման գործում:

Հետաքրքրականն այն է, որ որպես կանոն թե՛ համայնքների պորտֆոլիոներում է նշված զբոսաշրջությունը որպես գերակա ոլորտ, թե՛ նաև զարգացման հնգամյա ծրագրերում, բայց որոշում կայացնողներն այդ ոլորտում որոշում կայացնելիս պասիվ են:

Հիմա անդրադառնանք զբոսաշրջության մասին որոշումների կայացմանը, ուսումնասիրության հիմքում ունենալով՝ Տավուշի մարզի՝ Դիլիջան, Իջևան, Նոյեմբերյան, Բերդ համայնքները և Լոռու մարզի՝ Վանաձոր, Ստեփանավան, Տաշիր, Ալավերդի համայնքները:

Ուսումնասիրության նպատակը

Ուսումնասիրել ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի համայնքների ավագանու որոշումները և հասկանալ, թե ինչ զարգացման ուղղություններ են արտահայտվում դրանցում, արդյոք Տավուշի մարզի համայնքներում ավելի մեծ ուշադրություն կա զբոսաշրջության զարգացման վրա:


Ուսումնասիրության մեթոդաբանությունը

Ուսումնասիրության համար, դիտարկվել են՝


- Տավուշի մարզի՝ Դիլիջան, Իջևան, Նոյեմբերյան, Բերդ համայնքների 2025-2026 թթ. ավագանու որոշումները, տարեկան աշխատանքային պլանները, հնգամյա զարգացման ծրագրերը,
- Լոռու մարզի՝ Վանաձոր, Ստեփանավան, Տաշիր, Ալավերդի համայնքների 2025-2026 թթ. ավագանու որոշումները, տարեկան աշխատանքային պլանները, հնգամյա զարգացման ծրագրերը,
- Լոռու և Տավուշի մարզպետի աշխատակազմերի կայէջերը
- Կառավարության 2025-2026 թթ. որոշումները,
- ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կայքէջում առկա տեղեկատվությունը,
- Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության զարգացման 2026-2030 թվականների ռազմավարական ծրագիրը:

Ընդհանուր առմամբ դիտարկվել է 128 ավագանու նիստի 1796 որոշում, որոնք ըստ համայնքների արտացոլվում է հավելված 2-ում և 3-ում.

Ավագանու որոշումների ընդհանուր քանակն ըստ համայնքների



Հավելված 2



Հավելված 3

Լոռու մարզ

Լոռու մարզն ունի մի շարք առավելություններ՝ զբոսաշրջային մարզ համարվելու համար: Դրանք են՝

- Հարուստ մշակութային ժառանգությունը՝ 3.045 հուշարձաններ և կոթողներ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում ներառված Սանահինի և Հաղպատի վանական համալիրները, Թումանյանի մշակութային ժառանգությունը:
- Հարուստ և բազմազան բնությունը, որոնց թվում են անտառներ, ջրվեժներ, բնության տեսարաններ, 3 պահպանվող տարածքներ և 2 բուսաբանական այգի: Ռաֆթինգ ծառայությունները և քայլարշավների արահետները. Դեբեդը Հայաստանում ռաֆթինգի համար միակ հարմար գետն է: Լոռին ունի ամենամեծ քայլարշավային արահետների ցանցը տարածաշրջանում:
- Տեղակայումը. Լոռին տեղակայված է Վրաստան և Սևծովյան տարածաշրջան հասնելու ճանապարհին, ինչպես նաև Երևանից և Թբիլիսիից ոչ շատ մեծ հեռավորության վրա է: Մարզով անցնում են չորս միջպետական մայրուղիները և երկաթուղին՝ դեպի Վրաստան:

- Տեղական փորձառությունների առկայությունը. Սա ներառում է հյուրընկալ մարդկանց, ուտելի բույսերը, խոհանոցը, ինչպես նաև վերջիններիս հետ կապված փորձառությունները:
- Նորարարական և սմարտ մարզ. Լոռիում գործում են ՔՈԱՖ սմարտ կենտրոնը և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնը, որոնք առանձնացնում են մարզը որպես նորարական և սմարտ մոտեցումներին հավատարիմ:
- Հետխորհրդային արդյունաբերական ժառանգությունը. Վանաձորի լքված գործարանները, ինչպես նաև մարզի այլ հատվածներում տեղակայված չգործող հետխորհրդային արդյունաբերական ժառանգությունը մեծ հետաքրքրություն են վայելում զբոսաշրջիկների շրջանում:

Լոռու մարզում Վանաձորը, Ստեփանավանը, Ալավերդին, Դսեղը, Դեբետը, Թումանյանը և Օձունը համեմատաբար ավելի հայտնի զբոսաշրջային վայրեր են և ունեն գիշերակացի ավելի լայն հնարավորություններ՝ առկա են հյուրանոցներ, հանգստյան տներ, հյուրատներ, գլեմփինգ կացարաններ: Կացարանների բաշխվածությունը համահունչ է Լոռիում զբոսաշրջային վայրերի և հայտնի ուղղությունների կենտրոնացմանը: Մյուս կողմից, որոշ տարածքներ, ինչպիսիք են Տաշիրը և Սպիտակը, ունեն կացարանների սահմանափակ ընտրություն:

Լոռու մարզպետի աշխատակազմի՝ ի դեմս «Զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի» նախաձեռնությամբ և Գերմանիայի Միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից իրականացվող ԵՄ-ն բիզնեսի համար նախաձեռնության «Նորարարական տուրիզմի և տեխնոլոգիաների զարգացումը Հայաստանի համար» ծրագրի աջակցությամբ, մշակվել է Լոռու մարզի զբոսաշրջության կայուն զարգացման ճանապարհային քարտեզը: Վերջինում տեղ է գտել Լոռու մարզի զբոսաշրջության զարգացման տեսլականը, մեջբերում եմ.
«Լոռու մարզը վերածել կայուն, ապագային միտված և կենսունակ զբոսաշրջային ուղղության, որը կներկայացնի մարզի հարուստ մշակութային ժառանգությունը, հիասքանչ բնական տեսարանները և կապահովի իսկական ու կլանող փորձառություններ: Մեր նպատակն է. խթանել տնտեսական աճը, շրջակա միջավայրի պահպանությունը և բարձրացնել տեղական համայնքների բարեկեցությունը՝ միաժամանակ առաջարկելով այցելուներին բացահայտումների եզակի և անմոռանալի ճամփորդություն»[4]:

Այս ամենին զուգահեռ պետք է ուսումնասիրել, թե համայնքային իշխանություններն ինչ քայլեր են ձեռնարկում համայնքներում զբոսաշրջության զարգացման և կայացման համար:
Ուսումնասիրության համար ընտրվել են Վանաձոր, Ստեփանավան, Տաշիր, Ալավերդի համայնքները:

[4] http://lori.mtad.am/files/docs/71638.pdf

Վանաձոր

Խորհրդային տարիներին Վանաձորը եղել է արդյունաբերական և զբոսաշրջային քաղաք: Վանաձորը հակադրությունների քաղաք է՝ մի կողմում մխացող քիմգործարանն է, մյուս կողմում սաղարթախիտ անտառը և առողջարանները, որոնքը հնարավորություն են տալիս համայնքում զարգացնել զբոսաշրջության տարբեր ճյուղեր, որոնցից են՝ առողջարանային, քայլարշավային, արկածային և այլն:

Վանաձորի տեսարժան վայրերի թվին են պատկանում քաղաքի կենտրոնական Հայքի հրապարակը, Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցին, Թայիրովի ամառանոցը, Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատը, Վանաձորի դրամատիկական թատրոնը, Վանաձորի կերպարվեստի թանգարանը, Լոռի Փամբակի երկրագիտական թանգարանը և Ստեփան Զորյանի տուն-թանգարանը:

Վանաձոր համայնքում, չնայած համայնքի ունեցած պոտենցիալին, քիչ ծրագրեր են իրականացվում, որոնք առնչվում են զբոսաշրջության հետ:

Համայանքում զարգանում են ավտոճանապարհային ցանցը, հյուրանոցային և հյուրատնային ոլորտը, որոնք կարող են խթանել զբոսաշրջության զարգացմանը:

Բացի վերը թվարկված ծրագրերից ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտեի կողմից տրամադրվել է «Թաթոսյա» ՍՊԸ-ին աջակցություն Վանաձոր համայնքում «Զբոսաշրջության կրթության բարելավում՝ զբոսաշրջության ոլորտում դասընթացների իրականացնում, վերապատրաստում» միջոցառման շրջանակներում դասընթացների կազմակերպման համար:

Զուգահեռ իրականությունում՝ Վանաձոր համայնքում 2025-2026թթ. ավագանու նիստ տեղի է ունեցել 2 անգամ, որտեղ չի ընդունվել զբոսաշրջության վերաբերյալ ոչ մի հարց:

Ստեփանավան

Ստեփանավան համայնքում 2025-2026թթ. ընթացքում տեղի է ունեցել 18 ավագանու նիստ, որի ընթացքում ընդունվել է 129 որոշում, որից և ոչ մի որոշումը չի վերաբերվել զբոսաշրջությանը: Այն դեպքում, որ Ստեփանավանն, ինչպես նկարագրվում է նաև համայնքի անձնագրում, առողջարանային քաղաք է, որն էլ զբոսաշրջության շատ կարևոր ուղղություն է:

Զբոսաշրջությունը Ստեփանավանում գերակա ոլորտ է համարվում, քանի որ որպես զարգացման ուղղություն ներառված է նաև Ստեփանավան համայնքի զարգացման հնգամյա ծրագրում:

Այս ամենի ֆոնին տեղական իշխանությունների կողմից մեկ ամբողջ տարվա ընթացքում ոչ մի որոշում չկայացնելը խոսում է այն մասին, որ կամ համայնքի ավագանին դեր չունի հնգամյա զարգացման ծրագրի իրականցման գործում կամ էլ պարզապես հնգամյա զարգացման ծրագիրը չի իրագործվում:

Ստեփանավան համայնքի ավագանու որոշումները հիմնականում վերաբերում

են՝

- համայնքի բյուջեին և ֆինանսներին,
- հողային հարցերին
- կրթությանն ու մշակույթին
- ենթակառուցվածքների մասին

Տաշիր

Տաշիր համայնքում 2025-2026թթ. ընթացքում տեղի է ունեցել 18 ավագանու նիստ, որի ընթացքում ընդունվել է 159 որոշում, որից և ոչ մի որոշումը չի վերաբերվել զբոսաշրջությանը: Այն դեպքում, որ Տաշիրն ըստ համայնքի անձնագրի՝ զբոսաշրջային համայնք է:

Զբոսաշրջությունը Տաշիր համայնքում գերակա ոլորտ է համարվում, քանի որ որպես զարգացման ուղղություն ներառված է նաև Տաշիր համայնքի զարգացման հնգամյա ծրագրում:

Այս ամենի ֆոնին տեղական իշխանությունների կողմից մեկ ամբողջ տարվա ընթացքում ոչ մի որոշում չկայացնելը խոսում է այն մասին, որ կամ համայնքի ավագանին դեր չունի հնգամյա զարգացման ծրագրի իրականցման գործում կամ էլ պարզապես հնգամյա զարգացման ծրագիրը չի իրագործվում:

Տաշիր համայնքի ավագանու որոշումները հիմնականում վերաբերում են՝

- համայնքի բյուջեին և ֆինանսներին
- հողային հարցերին
- կրթությանն ու մշակույթին
- ենթակառուցվածքներին
- սոցիալական հարցերին
- համայնքային գույքին:

Ալավերդի

Ալավերդի համայնքում 2025-2026թթ. ընթացքում տեղի է ունեցել 24 ավագանու նիստ, որի ընթացքում ընդունվել է 290 որոշում, որից 3 որոշում վերաբերում է զբոսաշրջությանը: Այդ որոշումները հիմնականում վերաբերում են համայնքային ենթակառուցվածքների զարգացմանը և մշակութային կյանքի ակտիվացմանը, որն էլ զբոսաշրջության զարգացմանն է միտված:

Որոշումներից մեկը վերաբերվել է նրան, որ համայնքի ավագանին տվել է իր թույլտվությունը նոր հյուրանոցի կառուցման համար, մյուսը վերաբերվել է

ներհամայնքային տրանսպորտի երթուղիների սահմանմանը, որն էլ նպաստում է համայնքում առկա տեսարժան վայրերին հասնել զբոսաշրջիկի համար ավելի հասանելի տարբերակով:

Զբոսաշրջությունը Ալավերդի համայնքում ևս գերակա ոլորտ է համարվում, քանի որ որպես զարգացման ուղղություն ներառված է նաև Ալավերդի համայնքի զարգացման հնգամյա ծրագրում:

Ալավերդի համայնքի ավագանու որոշումները հիմնականում վերաբերում են՝

- համայնքի բյուջեին և ֆինանսներին
- հողային հարցերին
- կրթությանն ու մշակույթին
- ենթակառուցվածքներին
- սոցիալական հարցերին
- համայնքային գույքին:

Տավուշի մարզ

Տավուշի մարզը համարվում է զբոսաշրջության զարգացման մեծ ներուժ և լայն շուկա ունեցող մարզ, որի իրական զբոսաշրջային շուկան գնահատվում է տարեկան մոտ 300 000 ներգնա զբոսաշրջիկ՝ կազմակերպված(13%) և ինքնակազմակերպ(87%) այցելությունների տեսքով (2018 թ. տվյալների փորձագիտական վերլուծություն):

Զբոսաշրջությունը Տավուշի մարզում պետք է դառնա տեխնոլոգիական, ամբողջական, վերարտադրողական, ուսուցողական և շարունակական, իսկ Տավուշի մարզը զբոսաշրջության տեսանկյունից պետք է լինի տեղական, տարածաշրջանային և համաշխարհային նշանակության կայուն զբոսաշրջային դեստինացիա :

- Տեխնոլոգիական – մարզի զբոսաշրջության զարգացումը պետք է կապված լինի ժամանակակից տեխնոլոգիաների (համակարգչային, տեղեկատվական) հետ: Ամբողջական – զբոսաշրջությունը պետք է դիտարկել որպես համակարգ և համակարգի տարր:
- Վերարտադրողական – զբոսաշրջության զարգացումը պետք է հանգեցնի ինքնավերարտադրվող զբոսաշրջային ինդուստրիայի բաղադրիչների ձևավորմանը և զարգացմանը և չխախտի տեղական մշակութային և բնական համակարգերի ինքնավերարտադրման հատկությունները:
- Ուսուցողական – զբոսաշրջային ցանկացած գործունեություն պետք է հիմնվի կրթության վրա և ունենա կրթական բաղադրիչ:
- Շարունակական – զբոսաշրջային ցանկացած գործունեություն պետք է ունենա երկարաժամկետ նպատակներ և զարգացման ռազմավարություն:

Մարզի զբոսաշրջային հիմնական ենթակառուցվածքների շարքին են դասվում գիշերակացի և սննդի կազմակերպման 11 ձեռնարկությունները, հանգստի կազմակերպման համալիրները և տարածքները (հանգստի գոտիներ, համալիրներ):

Տավուշի մարզում ներկայումս գործում է շուրջ 130 գիշերակացի ձեռնարկություն (44 հյուրանոց և 86 հյուրատուն), որոնցից 60%-ը գտնվում է Դիլիջանի, 18%-ը Իջևանի, 14%-ը Նոյմբերյանի, 8%-ը Բերդի տարածաշրջանում: Տավուշի մարզում գործում է շուրջ 104 սննդի կազմակերպման ձեռնարկություն (71 ռեստորան, 33 սրճարան), որոնցից 37%-ը գտնվում է Դիլիջանի, 28%-ը Իջևանի, 24%-ը Նոյմբերյանի, 12%-ը Բերդի տարածաշրջանում: Մարզում գործում են նաև հանգստի կազմակերպման 6 համալիրներ (Պարզ լիճ, Քարի լիճ, Լաստիվեր, Ապագա ռեզորթ, Ալանդ ռեզորթ, Մենուա) և մոտ երեք տասնյակ հանգստի գոտիներ (Աղստև գետի հովտում):

Մարզում յուրահատուկ զբոսաշրջային ենթակառուցվածք են առողջարանները, որոնցից ներկայումս գործում է միայն «Լեռնային Հայաստան»-ը (Դիլիջան քաղաքում, ՊՆ ենթակայության): Բացի վերոնշյալից մարզի զբոսաշրջային առաջարկները ներկայանում են նաև էկոլոգիական երթուղիների (Դիլիջանի տարածաշրջան), լեռնահեծանվային երթուղիների (Դիլիջանի տարածաշրջան), քայլարշավային արահետների (Դիլիջանի, Բերդի, Իջևանի տարածաշրջաններ) և Տրանսկովկասյան արահետի (հիմնականում Դիլիջան ազգային պարկի տարածքում), ձիարշավների (հիմնականում Իջևանի տարածաշրջան) տեսքով: Յուրահատուկ զբոսաշրջային առաջարկներ են Աչաջուր գյուղում նորաբաց գինու բակը և տարբեր բնակավայրերում տեղացի բնակիչների կողմից արտադրվող տարատեսակ հուշանվերները: Տավուշի մարզում կազմակերպվում են նաև փառատոններ (Ենոքավանում՝ ՀայԲույս և Յելլ Էքստրիմ, Դիլիջանում՝ Բարդ ու Արվեստների և արհեստների, Բերդում՝ Մեղրի և հատապտղի, Իջևանում՝ Հայկական էքստրիմ փառատոն): Հաղարծին վանական համալիրը բացի պասիվ-ճանաչողական կրոնական զբոսաշրջությունից, առաջարկում է նաև ակտիվճանաչողական զբոսաշրջություն՝ «Ապրիր ինչպես վանական» զբոսաշրջային արտադրանքի տեսքով: Մարզին բնորոշ զբոսաշրջային յուրահատուկ ռեսուրս է համարվում հուշաղբյուրների կառուցման մշակույթը (Նոյեմբերյանի և Բերդի տարածաշրջաններ), որտեղ (հուշաղբյուրներում) ցանկացած ոք կարող է կազմակերպել իր ընտանիքի և ընկերների հետ մեկօրյա հանգիստ (անվճար): ՀՀ-ում գործող զբոսաշրջային ձեռնարկությունները (օպերատորները/գործակալները) իրենց զբոսաշրջային փաթեթներում հիմնականում առաջարկում են Հաղարծին, Գոշավանք վանական համալիրները, Գոշ և Պարզ լճերը, Դիլիջան քաղաքը, Լաստիվերը և Ենոքավանը (պասիվ/ճանաչողական զբոսաշրջություն համար): Առաջարկվող զբոսաշրջային փաթեթների 80%-ը սահմանափակվում է Դիլիջանի տարածաշրջանով և այցելությունները գրերթե 100%-ով (խմբերի համար) կազմակերպվում է մեկ օրով, իսկ երկու օրանոց տուրերը հիմնականում կազմակերպվում են անհատական տուրերի և սոցփաթեթներով այցելությունների դեպքում: Այցելությունները գրեթե 100%-ով տեղի են ունենում մայիս-սեպտեմբեր ամիսներին՝ կազմակերպված տուրերի դեպքում և 90%-ով՝ ինքնակազմակերպ այցելությունների դեպքում: Ներկայումս մարզ տարեկան այցելում է մոտ 300 000 ներգնա զբոսաշրջիկ, որից 13%-ը այցելում է կազմակերպված, իսկ 87%-ը ինքնակազմակերպ կերպով

Այս ամենին զուգահեռ պետք է անդրադարձ կատարվի, թե ինչքանով է տեղական իշխանությունը մասնակցում զբոսաշրջության զարգացմանն առանձին համայնքներում[5]:

[5] http://tavush.mtad.am/files/docs/45077.pdf

Այս ուսումնասիրությունն իրականացնելու համար Տավուշի մարզում ընտրվել են Դիլիջան, Իջևան, Նոյեմբերյան, Բերդ համայնքները:

Դիլիջան

Դիլիջան համայնքում 2025-2026թթ. ընթացքում տեղի է ունեցել 20 ավագանու նիստ, որի ընթացքում ընդունվել է 240 որոշում, որից 2 որոշումը վերաբերվում է զբոսաշրջությանը: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ Դիլիջանի համայնքի անձնագրում չի նշվում, որ համայնքը զբոսաշրջային է:

Զբոսաշրջությունը Դիլիջան համայնքում գերակա ոլորտ է համարվում, քանի որ որպես զարգացման ուղղություն ներառված է նաև Դիլիջան համայնքի զարգացման հնգամյա ծրագրում[6]: Դրա հիման վրա էլ 2025 թվականի Դիլիջան համայնքի տարեկան աշխատանքային պլանում[7] ներառվել է զբոսաշրջության վերաբերյալ ծրագրեր, որոնք չեն նկարագրվում և դրանից պարզ չի դառնում, թե կոնկրետ ինչ ծրագրեր են ակնկալվում իրականացնել: Բացի վերը նշված փաստաթղթերից կառավարությունը մի շարք որոշումներ և փաստաթղթեր ունի, որտեղ զբոսաշրջությունը նշվում է որպես գերակա ուղղություն և առանձնակի շեշտադրվում է նաև Դիլիջան համայնքը: Օրինակ ՀՀ Զբոսաշրջության զարգացման 2026-2030թթ. ռազմավարական ծրագրում[8], որպես առողջարանային կենտրոն նշվում է նաև Դիլիջանը, մեջբերում.

«Միջազգային զբոսաշրջիկների 54%-ը նախընտրում է առողջության վերականգնմանը կամ բարելավմանն ուղղված հանգիստ:Երկրում առկա առողջարանային ներուժ ունեցող բնակավայրերը (օրինակ՝ Ջերմուկը, Դիլիջանը, Վանաձորը, Արզնին, Հանքավանը և այլն) առանձնանում են բարենպաստ բնությամբ, հանգստի ու վերականգնման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներով»:

ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի[9] մեջ որպես կարևոր զբոսաշրջային կենտրոն Ջերմուկի և Ծաղկաձորի կողքին նշվում է նաև Դիլիջան զբոսաշրջային կենտրոնը, որն էլ ըստ ՀՀ Կառավարության 25 դեկտեմբերի 2025 թվականի N 1945-Ն որոշման[10] ընդգրկում է Դիլիջան, Հաղարծին, Խաչարձան, Հովք, Գոշ, Աղավնավանք, Թեղուտ բնակավայրերը և «Դիլիջան» ազգային պարկը: «Դիլիջան» ազգային պարկի մասին ՀՀ Կառավարությունը 23 փետրվարի 2017 թվականի N 190-Ն որոշումը[11] հաստատել է «ԴԻԼԻՋԱՆ» Ազգային Պարկի 2017-

[6] https://dilijancity.am/upload/DocFlow/Projects/We2232310275901748_20222027.pdf

[7] https://dilijancity.am/upload/DocFlow/Projects/Tu2541511371541748_2025.pdf

[8] https://www.e-draft.am/files/project_file/1/17478082281067.docx

[9] https://www.gov.am/files/docs/1322.pdf

[10] https://www.arlis.am/hy/acts/218766

[11] https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2017/02/17_0190.pdf

2026թթ. Կառավարման պլանը և կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները, որը ներառում է նոր տարածքների ընդգրկումը:
Բացի դրանից ՀՀ զբոսաշրջության զարգացման ռազմավարության նախնական վերլուծության[12] մեջ Դիլիջանը վերը թվարկված համայնքներից միակն է, որ նշվում է, որպես զբոսաշրջային մարքեթինգ 7 բրենդներից մեկը: Նույն փաստաթղթում նշվում է, որ Դիլիջանի հիմնական հիմնախնդիրներն են՝

- Աշխատուժի հմտությունների զարգացում.

Զբոսաշրջության ոլորտում աշխատողների մասնագիտական զարգացման ցածր մոտիվացիան հանգեցնում է հմտությունների սահմանափակման (օրինակ՝ օտար լեզուներով հաղորդակցումը), ինչը պայմանավորված է հմտությունների դիմաց պարգևավճարների բացակայությամբ: Այն բացասաբար է ազդում զբոսաշրջիկների ընդհանուր տպավորության վրա: Անհրաժեշտ է ապահովել բարձրակազ կրթություն մասնագիտական ուսումնական հաստատություններում, որոնք պատրաստում են հմուտ մատուցողներ, մարկետոլոգներ, շեֆ-խոհարարներ և մենեջերներ:

- Առաջարկների դիվերսիֆիկացում.

Այժմ կլաստերում նկատվում է զբոսաշրջիկների բարձր սեզոնայնություն: Բնության, մշակույթի և բիզնեսի գործունեության և հարմարությունների դիվեսիֆիկացման ուղղությամբ ներդրումներ կատարելը կապահովի կայուն երթևեկություն ամբողջ տարվա ընթացքում: Բնական առաջարկները կարող են ընդլայնվել՝ ներառյալով եղանակային/սեզոնային միջոցառումներ, որոնց մարդիկ սովորաբար չեն այցելում, բիզնես/ՀԽԳՑ առաջարկները կարող են ընդլայնել կոնֆերանսների/հանդիպումների վայրերը՝ գործարար մարդկանց խմբեր հուրընկալելու համար:
Ըստ ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտեի՝ 2025թ.-ի ընթացքում օժանդակել են Դիլիջան համայնքում իրականացվող մի շարք միջոցառումների՝

- «Աջակցություն Հայաստանում փառատոների կազմակերպմանը» միջոցառման շրջանակներում աջակցություն է տրամադրվել «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման» ՀԿ-ին՝ Դիլիջան քաղաքում կայացած Հայ-վրացական փառատոնի կազմակերպման համար և «Մեդիա Օնիքս» ՍՊԸ-ին՝ Դիլիջան քաղաքում կայացած «Արվեստների և արհեստների» փառատոնի կազմակերպման համար:

«Զբոսաշրջության կրթության բարելավում՝ զբոսաշրջության ոլորտում դասընթացների իրականացնում, վերապատրաստում» միջոցառման շրջանակներում Դիլիջան համայնքում դասընթացների կազմակերպման համար աջակցություն է տրամադրվել «Թաթոսյա» ՍՊԸ-ին:

Այս ամենի ֆոնին տեղական իշխանությունների կողմից մեկ ամբողջ տարվա ընթացքում կայացվել է 2 որոշում, որոնք վերաբերվել են զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացմանը:

[12] https://mineconomy.am/media/12644/HAVELVAC_3.pdf

Դիլիջան համայնքի ավագանու որոշումները հիմնականում վերաբերում են՝

- համայնքի բյուջեին և ֆինանսներին
- համայնքային գույքին
- հողային հարցերին
- կրթությանն ու մշակույթին:

Իջևան

Իջևան համայնքում 2025-2026թթ. ընթացքում տեղի է ունեցել 14 ավագանու նիստ, որի ընթացքում ընդունվել է 185 որոշում, որից 2 որոշումը վերաբերվում է զբոսաշրջությանը:

Զբոսաշրջությունը Իջևան համայնքում գերակա ոլորտ է համարվում, քանի որ որպես զարգացման ուղղություն ներառված է նաև Իջևան համայնքի զարգացման հնգամյա ծրագրում: Դրա հիման վրա էլ 2025 թվականի Իջևան համայնքի տարեկան աշխատանքային պլանում ներառվել է զբոսաշրջության վերաբերյալ ծրագրեր, որոնք չեն նկարագրվում և դրանից պարզ չի դառնում, թե կոնկրետ ինչ ծրագրեր են ակնկալվում իրականացնել: Այս ամենի ֆոնին տեղական իշխանությունների կողմից մեկ ամբողջ տարվա ընթացքում կայացվել է 2 որոշում, որոնք վերաբերվել են զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացմանը:

Իջևան համայնքի ավագանու որոշումները հիմնականում վերաբերում են՝

- համայնքի բյուջեին և ֆինանսներին,
- համայնքային գույքին,
- հողային հարցերին
- սոցիալական հարցերին

Նոյեմբերյան

Նոյեմբերյան համայնքում 2025-2026թթ. ընթացքում տեղի է ունեցել 19 ավագանու նիստ, որի ընթացքում ընդունվել է 497 որոշում, որից ոչ մի որոշում չի վերաբերվում զբոսաշրջությանը:

Զբոսաշրջությունը Նոյեմբերյան համայնքում գերակա ոլորտ է համարվում, քանի որ որպես զարգացման ուղղություն ներառված է նաև Նոյեմբերյան համայնքի զարգացման հնգամյա ծրագրում: Սակայն 2025 թվականի Նոյեմբերյան համայնքի տարեկան աշխատանքային պլանը տեղադրված չէ կայքէջում, որպեսզի կարողանանք հասկանալ արդյոք ՏԱՊ-ում ներառվել է զբոսաշրջության վերաբերյալ ծրագրեր:

Նոյեմբերյան համայնքի ավագանու որոշումները հիմնականում վերաբերում են՝

- համայնքի բյուջեին և ֆինանսներին,
- համայնքային գույքին,
- հողային հարցերին
- կրթությանն և մշակույթին:

Բերդ

Բերդ համայնքում 2025-2026թթ. ընթացքում տեղի է ունեցել 13 ավագանու նիստ, որի ընթացքում ընդունվել է 198 որոշում, որից ոչ մի որոշում չի վերաբերվում զբոսաշրջությանը:

Զբոսաշրջությունը Բերդ համայնքում գերակա ոլորտ է համարվում, քանի որ որպես զարգացման ուղղություն ներառված է նաև Բերդ համայնքի զարգացման հնգամյա ծրագրում: Սակայն 2025 թվականի Բերդ համայնքի տարեկան աշխատանքային պլանը տեղադրված չէ կայքէջում, որպեսզի կարողանանք հասկանալ արդյոք ՏԱՊ-ում ներառվել է զբոսաշրջության վերաբերյալ ծրագրեր:

Նոյեմբերյան համայնքի ավագանու որոշումները հիմնականում վերաբերում են՝

- համայնքի բյուջեին և ֆինանսներին
- համայնքային գույքին
- հողային հարցերին
- կրթությանը և մշակույթին
- սոցիալական հարցերին
- ենթակառուցվածքների զարգացմանը:


Համեմատական վերլուծություն զբոսաշրջության զարգացման մեջ ՏԻՄ դերակատարման վերաբերյալ

Վերլուծությունը ցույց է տալիս, որ

- Թե՛ Լոռու, թե՛ Տավուշի մարզերում զբոսաշրջությունը փաստաթղթային մակարդակում ներկայացվում է որպես առաջնահերթ զարգացման ուղղություն, սակայն համայնքային կառավարման գործնական մակարդակում այդ առաջնահերթությունը բավարար չափով չի արտահայտվում:
- Լոռու մարզում հարաբերականորեն առանձնանում է Ալավերդի համայնքը, որտեղ ընդունվել են ոլորտային որոշումներ:
- Տավուշի մարզում որոշակի ակտիվություն արձանագրվել է Դիլիջան և Իջևան համայնքներում, սակայն այդ ակտիվությունը հիմնականում սահմանափակվում է ենթակառուցվածքային հարցերով:
- Ընդհանուր առմամբ համայնքային օրակարգում գերակշռում են բյուջետային, հողային, վարչական և սոցիալական հարցերը, մինչդեռ զբոսաշրջությունը երկրորդական տեղ է զբաղեցնում:


Տես՝ Հավելված 4-ում և 5-ում

Ավագանու որոշումների թեմատիկ բաշխվածությունը



Հավելված 4

Ավագանու որոշումների թեմատիկ բաշխվածությունը Լոռու և Տավուշի մարզերի համեմատական բնութագրով



Հավելված 5

Եզրակացություն

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ Լոռու և Տավուշի մարզերի դիտարկված 8 համայնքներից միայն 3 համայնքում է տեղական իշխանության կողմից զբոսաշրջության վերաբերյալ որոշումներ կայացվել, ընդորում Լոռու մարզում միայն Ալավերդի համայնքում՝ 3 որոշում, Տավուշի մարզում՝ Դիլիջան և Իջևան

համայնքներում՝ յուրաքանչյուրում 2-ական որոշում: Սա ցույց է տալիս, որ ռազմավարական հայտարարությունների և գործնական կառավարման միջև առկա է զգալի տարբերություն:

Տես՝ հավելված 6-ում:

Զբոսաշրջության վերաբերյալ կայացված որոշումների նկարագիրը:

Համայնք	Զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացում	Մշակութային և զբոսաշրջային միջոցառումներ	Զբոսաշրջային տարածքների բարեկարգում
Ալավերդի	+	+	+
Իջևան	+	-	-
Դիլիջան	+	-	-

Հավելված 6

Լոռու և Տավուշի մարզերում զբոսաշրջությունը, թեև ձևականորեն դիտարկվում է որպես զարգացման կարևոր ուղղություն, գործնականում բավարար ուշադրության չի արժանանում:

Վերլուծությունը վկայում է, որ՝

- ծրագրային և ռազմավարական մակարդակներում առկա առաջնահերթությունները չեն վերածվում կոնկրետ գործողությունների,
- զբոսաշրջության զարգացմանն ուղղված որոշումները սահմանափակ են,
- ոլորտը չի դիտարկվում որպես համակարգային զարգացման գործիք:

Միաժամանակ երկու մարզերն էլ ունեն զգալի զբոսաշրջային ներուժ՝ բնական, մշակութային, պատմական և տնտեսական տեսանկյունից: Հետևաբար անհրաժեշտ է առավել նախաձեռնողական տեղական կառավարում, հստակ ծրագրավորում, նպատակային ֆինանսավորում և ոլորտի նկատմամբ համակարգային մոտեցում:

Այս պայմաններում զբոսաշրջությունը կարող է դառնալ Լոռու և Տավուշի մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման կարևոր շարժիչ ուժերից մեկը: